Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 189 - Ա որոշման

ԾՐԱԳԻՐ
«ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Էներգախնայողությունը ապահովելու նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի «Բերքաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի համայնքային կենտրոնի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան բնակավայրի համայնքային կենտրոնի տանիքներին այլընտրանքային արևային /ON GRID/ ֆոտովոլտային կայանների տեղադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան բնակավայր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 5,729,136.4 դրամ, որից Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի «Բերքաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝ 3,012,928. 80 դրամ, Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի համայնքային կենտրոն՝ 1,361,228. 80 դրամ և Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան բնակավայրի համայնքային կենտրոն 1,354,978. 80 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր «Բերքաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայր համայնքային կենտրոն և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան բնակավայրի համայնքային կենտրոն
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ամբողջ ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2021 թ. մարտի 22-ից մինչև 2021 թ. հունիսի 15-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի «Բերքաբերի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Բերքաբեր բնակավայրի համայնքային կենտրոնի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնքի Դիտավան բնակավայրի համայնքային կենտրոնի տանիքներին այլընտրանքային արևային /ON GRID/ ֆոտովոլտային կայանների տեղադրում: Ծրագրերը նախատեսվում է իրականացնել՝ 2021 թ. մարտի 22-ից մինչև 2021 թ. հունիսի 15-ը: Արժեքը՝ 5,729,136.40 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Այլընտրանքային /ON GRID/ ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 5,729,136.40 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ

11.03.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ